ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 8.

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

23 հունիսի 2023թ.

Նախագահ Մ.Ա.Զաքարյան

Քարտուղար Ք.Վ.Օթարյան

Ներկա էին խորհրդի 12 անդամներից 8 անդամները :

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց ֆակուլտետի դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Մ.Ա.Զաքարյանը:

ՕՐԱԿԱՐԳ

| | |
|---|---|
| 1. Ուսանողական խորհրդի (ՈՒԽ) և ուսանողական գիտական ընկերության (ՈՒԳԸ) նախագահների հաշվետվություն: | *Ֆակուլտետի ՈՒԽ և ՈՒԳԸ նախագահներ* |
| 2. ֆակուլտետի ամբիոնների վարիչների ամփոփիչ հաշվետվություն: | *Ամբիոնների վարիչներ* |
| 3. 2023թ. Առկա և հեռակա ուսուցման ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքների ամփոփում | Դեկան, |
| 4. 2022-23թթ ուս.տարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի ամփոփում | Դեկան, |
| 5.ինքնուրույն աշխատանքների կազմակերպման կարգի, բովանդակության և գնահատման չափանիշների հաստատում: | *Ամբիոնների վարիչներ* |
| 6.Ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների հաջորդ ուս. տարվա անհատական բեռնվածությունների ներկայացում և քննարկում: | *Ամբիոնների վարիչներ* |
| 7. Ֆակուլտետի 2022-23 ուս. տարվա գործունեության վերաբերյալ դեկանի հաշվետվություն: | *Դեկան,* |
| 8. Կրթական ծրագրի ղեկավարի ընտրություն: | *Դեկան,* |

Առցանաց քվեարկությամբ՝ ութ կողմ 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց

Որոշում՝ 1/1

- Հաստատել նիստի օրակարգը:

*Օրակարգի առաջին՝* ***«. Ուսանողական խորհրդի (ՈՒԽ) և ուսանողական գիտական ընկերության (ՈՒԳԸ) նախագահների հաշվետվություն»***, հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկան ՈՒԽ նախագահ Դիանա Գուլակյանը և ՈՒԳԸ նախագահ Սաթինե Սահակյանը։

Հաշվետվությունները տես հավելված 1-ում։

***Արտահայտվեցին՝*** *Մ. Զաքարյանը, Գ. Սարգսյանը, Ա. Հովակիմյանը, Ք. Օթարյանը։ Արտահայտվողները ներկայացրեցին. ՈՒԳԸ և ՈՒԽ նախագահները պետք է ակտիվ համագործակցություն ունենան ամբիոնի կողմից կազմակերպվող միջոցառումներին. կազմակերպեն ուսանողների ակտիվ մասնակցությունը գիտական զեկույցների իրականացմանը։ Օլիմպիական խմբակների ձևավորմանը։*

Առցանաց քվեարկությամբ՝ 8 կողմ 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց

**Որոշում՝ 1/2**

**Ընդունել ի գիտություն**

*Օրակարգի երկրորդ՝* ***«Ֆակուլտետի ամբիոնների վարիչների ամփոփիչ հաշվետվություն»****, հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկան Ա. Հովակիմյանը, Գ. Սիմոնյանը։*

***Արտահայտվեցին*** *Գ. Սարգսյանը, Մ. Զաքարյանը, Մ. Ճաղարյանը, Ք. Օթարյանը։*

***Հաշվետվությունները տես հավելված 2-ում։***

Առցանաց քվեարկությամբ՝ 8 կողմ 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց

**ՈՐՈՇՈՒՄ 1/3**

**Ընդունել ի գիտություն**

**Օրակարգի երրորդ՝ « 2023թ. Առկա և հեռակա ուսուցման ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքների ամփոփում»** հարցի վերաբերյալ

զեկուցումով հանդես եկավ Մ. Զաքարյանը: Նա ներկայացրեց, որ «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագրի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը նախագահում էր «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի ալգորիթմական լեզուների և ծրագրավորման ամբիոնի վարիչ, ֆ.մ.գ.թ., դոցենտ Արևշատ Գուրգենի Պողոսյանը:
Ամփոփիչ ատեստավորմանը մասնակցում էր 19 շրջանավարտ. 11-ը ստացավ «գերազանց», 5-ը՝ «լավ», 3-ը՝ «բավարար»: Հանձնաժողովի նախագահի կարծիքով՝ ցանկալի է, որ առաջադրված աշխատանքների թեմաները լինեն արդիական և կիրառական: Նախագահը «լավ» է գնահատել շրջանավարտների կողմից մասնագիտական գիտելիքների և պատկերացումների դրսևորման, դրանց կիրառման, դատողություններ անելու, հաղորդակցման կարողությունների, ինչպես նաև ինքնակրթության հմտությունների դրսևորման մակարդակը:

***Արտահայտվեցին.***

Ա. Հովակիմյանը, Գ. Սիմոնյանը, Մ. Ճաղարյանը: Արտահայտվողները ներկայացրեցին, որ առկա էին նորարարական աշխատանքներ: Գերազանց ստացող ուսանողների ինքնուրույն աշխատելու կարողությունները բարձր էր, առկա էին նորարարական աշխատանքներ:

ՈՐՈՇՈՒՄ 1/4

Բաց քվեարկությամբ՝ 8 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվել է.

**Ընդունել ի գիտություն**

Օրակարգի չորրորդ՝ «2022-23թթ ուս.տարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի ամփոփում» հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ Մ. Զաքարյանը: Զեկուցողը ներկայացրեց , որ հեռակա ուսուցման ինֆորմատիկա մասնագիտության 32 ուսանողներից անբավարար են ստացել 14 ուսանողներ, ԲԲ մասնագիտության 13 ուսանողներից անբավարար են ստացել 2 ուսանողներ:

***Արտահայտվեցին-*** Մ. Զաքարյանը, Ա.Հովակիմյանը, Գ.Սիմոնյանը, Մ.Ճաղարյանը, Ք.Օթարյանը:

**ՈՐՈՇՈՒՄ 1/5**

Բաց քվեարկությամբ՝ 8 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվել է.

Ընդունել ի գիտություն

Օրակարգի հինգերորդ՝ «ինքնուրույն աշխատանքների կազմակերպման կարգի, բովանդակության և գնահատման չափանիշների հաստատում», հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ Մ. Զաքարյանը: Մ. Զաքարյանի հաղորդումը հետևյալն է. ինքնուրույն աշխատանքները ներառվում է կրթական ծրագրի յուրաքանչյուր դասընթացի ընդհանուր ժամաքանակի մեջ և հաշվառվում է ըստ ԵՊՀ ԻՄ-ի ուսումնական գործընթացի կազմակերպման կարգի: Ներկայացրեց այդ աշխատանքների կատարման մեթոդները, ներկայացվող պահանջները, գնահատման չափանիշները, ուսանողների և դասախոսների պարտականությունները:

***Արտահայտվեցին-*** Ա.Հովակիմյանը, Գ.Սիմոնյանը, Մ.Ճաղարյանը, Գ. Գուլակյանը:

Արտահայտվողները ներկայացրեցին, որ ինքնուրույն աշխատանքների նպատակն է նպաստել ուսանողների հիմնավոր մասնագիտական գիտելիքների, կարողությունների և հմտությունների, հետազոտական և ստեղծագործական աշխատանքներ կատարելու փորձի ձևավորմանը: Քննարկեցին և անդրադարձան լսարային և արտալսարանային, արտալսարանային ինքնուրույն աշխատանքի ավելի քան երկու տասնյակ տեսակներին, իրենց կողմից ընտրված ինքուրույն աշխատանքների տեսակների իրականացման առավելություններին, առաջացած խնդիրներին ու դժվարություններին:

**ՈՐՈՇՈՒՄ 1/6**

Բաց քվեարկությամբ՝ 8 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվել է.

Ընդունել ի գիտություն

**Օրակարգի վեցերորդ՝** «Ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների հաջորդ ուս. տարվա անհատական բեռնվածությունների ներկայացում և քննարկում» հարցի վերաբերյալ Մ. Զաքարյանի հաղորդումը հետևյալն էր.

Ժամաքանակները կրճատվել են 1/3 - ով, հետևաբար որոշ դասախոսների դրույքաչափերը պակասել են: Մտածում ենք նոր մասնագիտություն՝ «ռադիոֆիզիկա» կրթական ծրագրով նոր մասնագիտություն ունենալու ուղղությամբ, մշակում ենք ծրագրի ընդունելության չափանիշները (պահանջները), անհրաժեշտ լաբորատորիաների ստեղծման և կահավորման պլաններ:

**Արտահայտվեցին-** Մ. Զաքարյանը, Ա.Հովակիմյանը, Գ.Սիմոնյանը, Մ.Ճաղարյանը, Ք.Օթարյանը:

**Առցանաց քվեարկությամբ՝ 8 կողմ 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց**

**Որոշում՝ 1/7**

**Ընդունել ի գիտություն**

***Օրակարգի յոթերորդ « Ֆակուլտետի 2022-23 ուս. տարվա գործունեության վերաբերյալ դեկանի հաշվետվություն:***

*ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2022-2026ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2022-2023ԹԹ. ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ*
*ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ*

| *ՌԾ-ի Գործողություն* | *Ակնկալվող վերջնարդյունքները և ցուցիչները* | *Իրականացված աշխատանքները և ձեռք բերված արդյունքները /նշել հիմքերը/* | *Չիրականացած աշխատանքները և դրանց պատճառները* |
|---|---|---|---|
| 1.5.3. ԵՊՀ-ի աջակցությամբ միջազգային համագործակցության շրջանակներում ապահո-վել դասախոսների և ուսանող-ների վիրտուալ շարժունու-թյունը: | • Ապահովել դասախոսների և ուսանողների վիրտուալ շար-ժունության դեպքեր: | Ապահովվել է դասախոսների և ուսանողների վիրտուալ շարժունություն | - |

| | | | |
|---|---|---|---|
| 2.1.1. Մշակել և իրակա-նացնել ավարտական աշխատանքների և մագիս-տրոսական թեզերի գիտա-կան մակարդակի բարձ-րացմանը միտված քաղաքականություն: | Ապահովել ավարտական աշխատանք-ների և մագիստրոսական թեզերի գիտական մակարդակի բարձ-րացմանը միտված գործող քաղաքականություն | • Իրականացվել է Բենչմարքինգի արդյունքների վերլուծություն,<br>• ավարտական աշխատանք-ների և մագիստրոսական թեզերի գիտական մակարդակի բարձ-րացմանը միտված գործող քաղաքականություն գիտ.խորհրդի թ.2 նիստի 24.10.2022թ./ | - |
| 2.1.2. Գիտահետազոտական ինստիտուտների հետ ներդնել մագիստրոսական համատեղ կրթական ծրագրեր: | • ՈՒնենալ համապատասխան գիտահե-տազոտական ինստիտուտի հետ կնքած համագործակցության առնվազն 1 հուշագիր: | • Ուսումնասիրվել է մագիստրոսական կրթական ծրագրերի պահանջարկը և միտումները տարածաշրջանում:<br>• Ուսումնասիրվել ՀՀ-ում գործող մագիստրոսական ծրագիր իրականացնող գիտահետազոտական ինստիտուտների մեզ հետաքրքրող կրթական ծրագրերը:<br>• Անհրաժեշտ է ապահովել նոր կրթական ծրագրերի ներդրում | - |
| | 1. | • | - |
| 2.1.3. Ավարտական աշխա-տանքների և մագիստրոսա-կան թեզերի ղեկավարման գործում ներգրավել փորձա-ռու հետազոտողների: | • Ապահովել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ղեկավարման գործում ներգրավ-ված հետազոտողների թվաքանակի աճ, | Ապահովվել է ավարտական աշխատանք-ների և մագիստրոսական թեզերի ղեկավարման հետազոտականի մասի աճ, ներգրավել են գրախոսման գործում փորձառու հետազոտողներ /ամբիոնի 09.09.2022թ., թ. 2 նիստի: | - |
| | • Ապահովել համագործակցության պատրաստ հետազոտողների գործող բազա, | 2.Հնավորվել է փորձառու հետազոտողների կադրային բազա:<br>3. Իրականացվել են փորձառու հետազոտողներին խրախուսելու միջոց | - |
| | | | - |
| 2. 1. 4. Կրթական գործըն-թացում զարգացնել նախա-գծի և խնդրի վրա հիմնված ուսումնառության մոտե-ցումները: | • Ապահովել նախագծի և խնդրի վրա հիմնված ուսումնառության մո-տեցումներով իրականացվող դասընթացների թվաքանակի աճ, | 1. Ներ է դրվել ուսանողերի ինքնուրույն աշխատանքների կազմա-կերպման կարգը: | - |
| | 2. Խրախուսել նախագծի և խնդրի վրա հիմնված ուսումնառության մոտեցումները: | • Մշակվել է խրախուսման միջոցներ, | - |
| | •Ապահովել լավագույն փորձի տարածման հանդիպում-քննարկումների քանակի աճ: | • Անցկացվել է լավագույն փորձի տարածման շարունակական հանդիպում-քննարկումներ | - |
| 2. 1. 5. Մասնաճյուղում ակտիվացնել գիտահետա-զոտական գործունեությու-նը՝ ստեղծելով անհրաժեշտ կառույցներ և ապահովելով անհրաժեշտ միջավայր: | • Ապահովել ավարտական և մագիստրո-սական աշխատանքների ու գի-տական խմբերում իրականաց-վող աշխատանքների համապա-տասխանության բարձր աստիճան, | Ներ է դրվել ավարտական և մագիստրոսական աշխատանքների ու գի-տական խմբերում իրականացվող աշխատանքների համապա-տասխանության: | - |
| 2.2. 4. Իրականացնել վերա-պատրաստումների շարք՝ նպատակաուղղված հոդ-վածներ գրելու կարողու-թյունների զարգացմանը: | 1. Երիտասարդ գիտնականների և ուսանողների համար պարբերաբար իրականացնել հոդվածներ գրելու կարողությունների զարգացմանն ուղղված վերապատրաստումներ: | • Իրականացվել է դասա-խոսների վերապատրատում՝ քանակական աճ | - |
| | • Ապահովել երիտասարդ հետազոտող դասախոսների տպագրած աշխա-տանքների թվի աճ վարկանի-շային ամսագրերում: | 2. Պատրաստել հոդվածներ գրելու կարողությունների զարգացման վերաբերյալ ուղեցույց: | - |
| 2.2. 5. Սահմանել ամեն-ամյա մրցանակներ «Տարվա դասախոս», «Տարվա հետա-զոտող», «Տարվա ուսանող» անվանակարգերում: | • Առաջնորդվել հաստատված համապատասխան կարգերի հիման վրա, | 1. Տեղայնացնել ԵՊՀ «Տարվա դասախոս» ամենամյա մրցույթի կազմակերպման և անցկացման կարգը: | - |
| | | 2. Տեղայնացնել ԵՊՀ «Տարվա ուսանող» ամենամյա մրցույթի կազմակերպման և անցկացման կարգը: | - |
| 2.3.1. Մշակել և ներդնել բաց գիտության քաղաքականություն: | • Ապահովել բաց գիտության համակարգում աշխատանքները կազմակերպելու կարգ, | 1.Մշակել բաց գիտության համակարգում աշխատանքները կազմակերպելու կարգ: | - |
| | • Վերապատրաստված աշխա-տակիցների քանակական աճ, | • Կազմակերպել վերապատրաստումներ բաց հասանելիություն ունեցող գիտական հարթակներում հրապարակումներ անելու համար: | - |
| | • բաց հասանելիություն ունեցող գիտական հարթակներում ընդգրկված աշխատակիցներ | • Խրախուսել բաց հասանելիություն ունեցող գիտական հարթակներում ընդգրկված աշխատակիցներին: | |

| | | | |
|---|---|---|---|
| 2.3.2. Բարելավել Մասնա-ճյուղի հետազոտողների ներ-կայացվածությունը մաս-նագիտական ցանցերում: | • Մասնագիտական ցանցերի վերաբերյալ աշխատակիցների իրա-զեկվածություն | 1. Բարձրացնել մասնագիտական ցանցե-րի վերաբերյալ աշխատակիցների իրա-զեկվածությունը: | |
| | • Բարձրացնել մասնագիտական ցանցերում Մասնաճյուղի հետազոտողների ներկայացվածության քանակական աճ: | 2. Կազմակերպել վերապատրաստումներ և զարգաց-նել աշխատակիցների ցանցերից օգտվելու կարողությունները: | |
| 2.3.3. Ապահովել համալսա-րանական վիրտուալ տիրույթում գիտական շտեմարաններ մուտքի հնարավո-ր-ություն: | • Ապահովել իրազեկված աշխատակիցների թվաքանակի աճ, | • Ապահովվել իրազեկված աշխատակիցների թվաքանակի աճ, | |
| | • Ապահովել գիտական շտեմարաններից օգտվող աշխատակիցների քանակ: | 2. Ապահովվել է վիրտուալ տիրույթում ԵՊՀ գիտական շտեմարաններ մուտքի հնարավորությունները: | |
| 2.3. 4. Խթանել միջազգային և հանրապետական վարկանիշային գիտական հանդեսներում հոդվածների հրապարակումը: | • Ունենալ միջազգային և հանրա-պետական վարկանիշային գիտակ ան հանդեսներում հոդվածների հրապարակման համար տրվող մասնաբաժնի աճ,<br>• Ապահովել հրապարակումների թվաքանակի աճ: | 1. Վերանայում է «ԵՊՀ ԻՄ աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատար-ման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման» կարգը: | |
| 2.4.2. Խրախուսել գիտու-թյան տարբեր բնագավառ-ների միջգիտակարգային հետազոտությունների կատարումը: | • Ապահովել միջգիտակարգային հետազո-տությունների խրախուսման ներդրված մեխանիզմներ, | 2. Ապահովվել է դրամաշնորհային մրցույթնե-րում առաջնահերթություն հանդիսացող միջգիտա-կարգային հետազոտական ծրագիր: | |
| | • Ապահովել Միջգիտակարգային հետազո-տական աշխատանքներով ներ-քին դրամաշնորհային ծրագրերի թվի աճ: | | |
| 2.5. 1. Բուհերի և գիտա-հետազոտական ինստի-տուտների հետ իրակա-նացնել համատեղ նախա-գծեր: | • Իրականացնել համատեղ կազմակերպված գիտաժողովներ: | 5. իրականացվել է գիտահետազոտական ինստիտուտների կամ կենտրոնների հետ համատեղ գիտաժողովներ: | |
| 2.5.2. Ընդլայնել գիտահե-տազոտական ինստիտուտների և բուհերի առաջատար մասնագետների ներգրավվածությունը ավարտական աշխատանքների ու մագիս-տրոսական թեզերի համա-ղեկավարման գործում: | 1. Խրախուսել ավարտական աշխատանքների ու մագիստ-րոսական թեզերի ղեկավարման գործում գիտահե-տազոտական ինստիտուտների և բուհերի առաջատար մասնագետների ներգրավվածությունը: | • Ապահովվել է գիտահետազոտական ինս-տի-տուտների և բուհերի առա-ջատար մասնագետների համա-ղեկավարությամբ իրականաց-ված ավար-տական աշխատանք-ների, մագիստրոսական թեզերի թվաքանակի աճ: | |
| 2.5. 4. Ուսանողների ավար-տական աշխատանքերի հետազոտական բաղադրիչը փոխկապակցել մարզի համայնքային հիմնախնդիր-ների հետ: | • Ունենալ կնքված համագործակցու-թյան հուշագրեր, | Իրականացվել է ավարտական աշխատանքերի հետազոտական բաղադրիչի փոխկապակցվածությունը մարզի համայնքային հիմնախնդիր-ների հետ | |
| | • Ավելացնել մարզի հիմնախնդիր ներին փոխկապակցված ավարտա կան աշխատանքների թիվը, | 2. Ավելացվել է ավարտական աշխատանք-ների թեմաների համապատասխանեցումը մարզի հիմնախնդիրներին: | |
| | • Բարձրացնել վերապատրաս տված աշխա-տակիցների քանակը,<br>• Ապահովել միջազգային դրամա շնորհային նախագծերում աշխա տակիցների մասնակցության թվա-քանակ, | 2.Կազմակերպվել՝ խորհրդատվություններ մասնաճյուղի աշխատակիցներին միջազգային գիտակրթական հիմնադրամներով ֆինանսավորվող նախագծեր մշակելու համար: | |
| 2.7. 1. Կանոնակարգել դրա-մաշնորհային ծրագրերի համար դիմելու գործընթացը, պարբերաբար իրակա-նացնել մշտադիտարկում և վերահսկողություն: | • Ներդնել դրամաշնորհային ծրագրերի փաթեթների վերաբերյալ զեկույց, առաջարկներ, | 1.Վերանայվել է նախկին դրամաշնոր-հային ծրագրերի ֆինանսավորման փաս-տաթղթային փաթեթները: | |

| | | | |
|---|---|---|---|
| | • Ապահովել ներբուհական դրամաշնորհային ծրագրերի թվի աճ,<br>• Դրամաշնորհային ծրագրերի մասնակիցների թվի աճ, | • Ապահովվել է դրամաշնորհային ծրագրերի մշտադիտարկման հրապարակված զեկույցներ | |
| 2.7.2. Բարելավել ներբուհա-կան դրամաշնորհային ծրագրերի իրականացման գործընթացը: | • Ապահովվել է դրամաշնորհա ային ծրագրերի մշտադիտարկման հաստատված նոր մեխանիզմներ, | • Առկա է դրամաշնորհային ծրագրերի մշտադիտարկման հրապարակված զեկույցներ /ֆակ-ի գիտ. խ. նիստ.թ. 2 24.10.2022թ./ | |
| | • Ապահովվել է դրամաշնորհային ծրագրերի մշտադիտարկման հրապարակված զեկույցներ | 2. Կատարվում է դրամաշնորհային ծրագրերի իրականացման մշտադիտարկում: | |
| 2.8. 1. Զարգացնել հետազո-տությունների իրականաց-ման էթիկայի նորմերի պահպանման մեխանիզմները: | • Ապահովվել է կազմակերպված դասընթաց-ների և վերապատրաստումների քանակը: | 1. Իրազեկել են աշխատակիցները հետազո-տությունների իրականացման էթիկայի նորմերին, հեղինակային իրավունքի և մտավոր սեփականության վերաբերյալ իրավական ակտերին: | |
| | 2. Ապահովվել է բաց գիտական միջավայրում գործող բարեվարքության կանոնների վերաբերյալ աշխատակիցների իրազեկվածությունը: | • իրազեկվածության ապահովում աշխատակիցների բաց գիտական միջավայրում գործող բարեվարքության կանոնների վերաբերյալ | |
| | 3. Ուսանողներին և երիտասարդ հետազոտողներին տրամադրվել է մասնագիտական աջակցություն: | | |
| 3. 1. 1. Ապահովել կայուն հա-մագործակցություն լրա-ցուցիչ կրթական ծրագրերի տարբեր շահակիցների հետ: | • Մշակվել է Մասնաճյուղի հետ լրացուցիչ կրթական ծրագրերի տարբեր շահակիցների հետ համագոր-ծակցության առաջարկների հաստատված փաթեթ, | 1. Ապահովվել է մասնաճյուղի հետ լրացուցիչ կրթական ծրագրերի տարբեր շահակիցների համագործակցության ձևեր և մեխանիզմներ: | |
| 3.1.2. Մշակել և ներդնել աշխատանքին կողմնորոշ-ված լրացուցիչ կրթական ծրագրեր: | • Ապահովվել է լրացուցիչ կրթության հաստատված քաղաքականություն, | 1. Մշակվել է լրացուցիչ կրթության հայեցակարգ: | |
| 3.2.1. ԵՊՀ ԻՄ-ի տարբեր ստորաբաժանումների ներգրավմամբ ձևավորել ձեռնարկությունների հետ համագործակցության ընդհանուր համակարգ: | • Առկա է ձեռնարկությունների հետ համատեղ իրականացվող նա-խագծերում ներգրավված ուսա-նողներ և նրանց թվաքանակի աճ, | 2. Իրականացվել է տարա-ծաշրջանի ձեռնարկությունների հետ հա-մագործակցային ծրագրեր, որոնք նպաստում են սովորողների ձեռներեցությամբ զբաղ-վելու հնարավորությունների զարգացմանը: | |
| | 3. Իրականացվել է բիզնես համագործակցու-թյունը մարզի ինքնակառավարման մարմինների և գործարար ընդհանրության հետ՝ տարածաշրջանային խնդիրներ լուծելու համար: | • Ակտիվացվել է մարզի ինքնակառավարման մարմինների և գործարար ընդ-հանրության հետ բիզնես համա-գործակցության շրջանակներում լուծված 3 տարածաշրջանային խնդիր, | |
| | • Ապահովվել է բազային կազմակերպություն-ների աշխատակիցների կողմից դասախոսական կազմի համար կազմակերպված տարեկան 3 խորհրդատվություն, | 4. Կազմակերպվել է Պրոֆեսորադասախոսական կազմի համար կոնսուլտացիա-ներ՝ ներգրավելով բազային կազմակեր-պությունների աշխատակիցներին: | |
| | 5. Ակտիվացվել է համագործակցությունը տարածաշրջանային քոլեջների հետ՝ լրացուցիչ կրթական ծառայություններով աջակցելու համար: | • Բարձրացել է տարածաշրջանի քոլեջներում իրականացված լրացուցիչ կրթա-կան ծառայություններ, | |
| | • Տրվել է գործատու կազմակեր պությունների աշխատակից-դասախոսների թվաքանակի աճ, | 6. Ապահովվել է Ուսումնական գործընթացում ներգրավվածությունը գործատու-կազմակերպությունների ներկայացուցիչներին՝ ուսանողների մասնագիտական կոմպետենցիաների զարգացման հետ | |
| | • Առկա է գործատու-կազմակերպու-թյունների ռեսուրսների օգտա-գործման վերաբերյալ համաձայ-նագրերի առկայություն և հաշվետվություններ:<br>• | Ընդգրկվել են գործատու-կազմակերպու-թյունների աշխատակից-դասախոսներ | |

| | | | |
|---|---|---|---|
| 3.2.2. Իրականացնել ԵՊՀ ԻՄ-ի՝ վերջին 5 տարիների շրջանավարտների զբաղ-վածության և աշխատաշու-կայի կարիքների ուսումնա-սիրություն: | • Ապահովել է իրականացվել է ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտների զբաղ-վածության և աշխատաշուկայի կարիքների մշտադիտարկման (մոնիթորինգի) ներդրված համակարգ, | 1. Ապահովված է Տավուշի մարզի Իջևան քաղաքի Զբաղվածության կենտրոնի, մարզպետարանի համապատասխան բաժնի հետ՝ շրջանավարտների զբաղվածության և աշխատաշուկայի կարիքների կապը | |
| | • Իրականացվում է Գործող «Շրջանավարտների միությանը», հետ կապը<br>• Առկա է շրջանավարտների կողմից ֆինանսական և նյութական աջակցություններ Մասնաճյուղին, | 2. Ապահովվել է ԵՊՀ ԻՄ-ը իր շրջանավարտների հետ, «Շրջանավարտ-ների միության» կապը. ներգրավելով հաջողության հասած շրջանավարտների աջակցությունը | |
| | 3. Իրականացվում է Մասնաճյուղի շրջանա-վարտների զբաղվածությանն աջակցելու գործընթացները: | • Իրազեկվել է թափուր աշխատատեղերի վերաբերյալ հայտարարություն-ներ մասնաճյուղի կայքում և աջակցության դասընթացները: | |
| | • Ներգրավվածություն Էքսպոներին և աշխատան-քային տոնավաճառներին: | Ակտիվացվել է ֆակուլտետի Էքսպոների և աշխատանքի տոնավաճառների մասնակցությունը | |
| 3.2.4. Կազմակերպել և իրա-կանացնել լրացուցիչ պրակ-տիկաներ (ինտերնշիփ, մենթորշիփ և այլն): | • Առկա է լրացուցիչ պրակտիկաներ անցկացնելու հիմնարկ-ձեռնարկությունների ցանկը, | 2. Կազմակերպվում է լրացուցիչ պրակտիկաներ հիմնարկ-ձեռնարկությունների հետ | |
| | 4. Ապահովվել է ուսանողների մասնակցությունը լրացուցիչ պրակտիկաներին: | 3. Ուսումնասիրվել և հստակեցվել է լրացուցիչ պրակտիկաներ անցկացնելու նպատակով համագործակցող հիմնարկ-ձեռնարկությունների ցանկը: | |
| | • Ապահովված է պրակտիկան երից ուսանողների բավարարվա ծության աճը: | • | |
| | • Առկա է շահակիցների վերհանված լրացուցիչ կրթական կարիքների հաշվառման տվյալների բազա | • Մշակվել է շահակիցների վերհանված լրացուցիչ կրթական կարիքների հաշվառման տվյալների բազան | |
| 3.3.2. Շահակիցներին տրա-մադրել մասնագիտական աճին և կարիերայի զարգացմանը նպաստող խորհրդա-տվական ծառայություններ: | • Ապահովվել է տարեկան իրականացված խորհրդատվություն | 1. Ըստ պլանի իրականացվել են խորհրդատվություններ արտաքին շահակիցներից | |
| 3.3.3. Խթանել նորարա-րական մոտե-ցումների և մեթոդների կիրառումը ոչ ֆորմալ կրթական ծրագրերի (նախաձեռնությունների) իրականաց-ման գործընթացներում: | Մշակվել է խրախուսման մեխանիզմներ ֆորմալ կրթության իրակա-նացման գործընթացում նորարարական մոտեցումների և մեթոդների կիրառման համար : | • Իրականացվել է ոչ ֆորմալ կրթության իրա-կանացման գործընթացում նորարարական մոտեցումների և մեթոդների կիրառման համար խրախուսման մշակված մեխանիզմներ, | |
| 3.4.2. Ակտիվացնել համա-գործակցությունը տարածա-շրջանի հասարակական, կրթական, տնտեսական և մշակութային կառույցների հետ: | • Իրականացվել է ծրագիր, տարածաշրջանի հասարակական, կրթական, տնտեսական և մշակութային կառույցների հետ | 1. Մշակվել և իրականացվել է տարածաշրջանի հասարակական, կրթական, տնտեսական և մշակու-թային կառույցների հետ փոխհամագործակցության ծրագրերի պլան: | |
| | | • Ապահովված է Մասնաճյուղի ներգրավվածության մասնակցությունը մարզի հասարակության համար իրականացվող ծրագրում: | |
| | • պլանավորված ծրագրերի իրականացում | Ժամանակացույցի համաձայն իրականացվել են պլանավորված ծրագրերը | |
| 3.4.4. Բարելավել հասարակության հետ կապերի ձևա-վորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմները: | • Մշակել է հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող Մասնա-ճյուղում գործող հետադարձ կապի մեխանիզմները: | 1. Ապահովվել է հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող փոխհամագործակցության | |
| | • Իրականացվել է գործող կապի մեխանիզմների արդյունավետության գնահատման և բարելավման առաջարկների զեկույց | • | |
| | 3. Ապահովվել է գործարկվող հետադարձի կապի մեխանիզմները: | • Առկա է հասարակության հետ հետադարձ կապի ապահովման գործող մեխանիզմներ: | |

| | | | |
|---|---|---|---|
| **3. 4. 5.** Ակտիվացնել համա-գործակցությունը Մասնա-ճյուղում գործող կենտրոն-ների (Անգլերենի ռեսուրս կենտրոնի, Գյումրիում Ռուսաստանի գիտության և մշակույթի կենտրոնի Իջևանի մասնաճյուղի, «Ամերիկյան գրադարան և դասընթացների կենտրոն»-ի, Տավուշի մարզի Գիտելիք նորարարական հաբի) հետ: | • Ապահովված է Կենտրոնների հետ համատեղ իրականացված առնվազն 30 ծրագիր: | | |
| | | **2. Ներգրավված են Մասնաճյուղի շահակից-ները ծրագրերի իրականացման գործընթացներում:** | |
| **3.5. 5.** Պարբերաբար իրա-կանացնել ԵՊՀ ԻՄ-ի միջազգայնացման բենչմար-քինգ և տարեկան գործողու-թյունների պլանավորում: | • Ապահովվել է ԵՊՀ ԻՄ-միջազգայնացման տարեկան գործողություններ | 2. Կազմվել և իրականացվում է միջազգայնացման տարեկան գործողությունների հաստատված ծրագիր և պլան-ժամանակացույց: | |

***Արտահայտվեցին-*** *Ա.Հովակիմյանը, Գ.Սիմոնյանը, Մ.Ճաղարյանը, Ք.Օթարյանը:*

Առցանաց քվեարկությամբ՝ 8 կողմ 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց

Որոշում՝ 1/8

Ընդունել ի գիտություն

Օրակարգի ութերորդ՝ «Կրթական ծրագրերի ղեկավարի ընտրություն» հարցի վերաբերյալ Մ. Զաքարյանի հաղորդումը հետևյալն է .

Քանի որ «Ծ/ԻՏ» ամբիոնի վարիչ և կրթական ծրագրի ղեկավար տեխ. գ. թ. ,դոցենտ Աննա Սեդրակի Հովակիմյանը պատշաճ մակարդակով է իրականացրել կրթական ծրագրի ղեկավարի գործառույթները , ապա նպատակահարմար է գտնում դարձյալ ընտրել որպես «Ի/ԿՄ» կրթական ծրագրի ղեկավար:

***Արտահայտվեցին-*** *Գ.Սիմոնյանը, Մ.Ճաղարյանը, Ք.Օթարյանը:*

Առցանաց քվեարկությամբ՝ 8 կողմ 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց

Որոշում՝ 1/8

Կրթական ծրագրերի ղեկավար Ներկայացնել տնօրենի հրամանագրմանը:

*ՀԱՎԵԼՎԱԾ 1*

Հաշվետվություն
ԵՊՀ ԻՄ Բնագիտական ֆակուլտետի ՈՒԽ նախագահ Դիանա Գուլակյանի

*2022-2023 ուս. տարում կատարած աշխատանքների մասին*

Ես՝Դիանա Գուլակյաննս, 2022թ սեպտեմբերի 1ից սովորում եմ ԵՊՀ ԻՄ-ի ԲԳՖ-ի ԻԿՄ բաժնում: Համալսարան ընդունվելուց հետո ցանկություն հայտնեցի գրանցվել Ուսանողական Խորհրդում: Եղել եմ Պարի և երգի խմբակներում:

Նախքան ԲԳՖ-ի նախագահ ընտրվելը մասնակցել եմ մի շարք մշակույթային միջոցառումների:Փորձել եմ մաքսիմալ լինել ակտիվ:

2023թ. Փետրվարին պիտի կայանային ՈՒԽ-ի ԲԳՖ-ի նախագահի ընտրությունները և ես ցանկություն հայտնեցի առաջադրել իմ թեկնածությունը: Նախագահական կազմը տեսնելով իմ ակտիվությունը վստահեցին և ընտրեցին որպես ԲԳՖ-ի նախագահ:

**ԵՊՀ ԻՄ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**
**(ԲԳՖ)**
**2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ 2-ՐԴ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ**

| թիվ | ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ | ՆՊԱՏԱԿԸ/ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ (ԱԱ) | ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՔԱՅԼԵՐԸ | ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ/ԺԱՄԿԵՏ | | ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՄԲ | ԿԱՏԱՐ ՑՈՒ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Պատասխանատու | Կատարողներ | | |
| 1 | ԷՀՄ- դասընթաց | . Ավագ սերնդի փորձի փոխանակում<br>. հարց ու պատասխան | 1. Հանդիպում ավագ կուրսեցիների հետ<br>2. Քննարկում | ԲԳՖ նախագահ՝ Դ. Գուլակյան | ԲԳՖ նախագահ՝Դ. Գուլակյան | Ավագ սերնդի ծրագրավորո ղների հետ | Իրականա դասընթաց ընտրությո |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 2 | Կինոդիտում՝ ԻԿՄ մասնագիտության ուսանողների համար | . Մոտիվացնել ուսանողներին,<br>. Նոր գիտելիքների ձեռք բերում: | 1. Ընտրել ֆիլմ<br><br>2. Ստեղծել հայտադիմում<br><br>3. Ըստ ցանկացողների քանակի ցուցադրել ֆիլմը | ԲԳՖ նախագահ՝ Դ. Գուլակյան | ԲԳՖ նախագահ՝ Դ. Գուլակյան | Դեկանի հետ | Մոտիվաց ուսանողն |
| 3 | Բաց առաջնություն | << Ուսանողության և հարակից դպրոցների աշակերտների համագործակցություն >> | 1.Կազմել համապատասխան սցենար<br><br>2.Կարգավորել տեխնիկական խնդիրները<br><br>3.Տեղեկացնել ուսանողներին և դպրոցականներին<br><br>4.Հրավիրել դասախոսների և տնօրինությանը | ԲԳՖ նախագահ՝Դ. Գուլակյան | ԲԳՖ նախագահ՝ Դ. Գուլակյան | Համապատասխան դասախոսների հետ | Ուսանողն դպրոցակ մասնակցո |
| **4** | **Դիպլոմների հանձնում** | | **1.կազմակերպել միջոցառում<br>2.Դիպլոմների հանձնման արարողություն** | **ՈՒԽ նախագահ՝ Է.Խաչատուրյան** | **ՈՒԽ - ի անձնակազմ** | **Համալսարանի անձնակազմի հետ** | |

Հաշվետվություն

ԵՊՀ ԻՄ Բնագիտական ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահ Սաթինե Սահակյանի

***2022-2023 ուս. տարում կատարած աշխատանքների մասին***

Ես՝ Սաթինե Սերգոյի Սահակյանս, ԲԳՖ-ի ՈՒԳԸ ժամանակավոր նախագահն եմ, ինքս եմ ցանկություն հայտնել զբաղեցնելու այս պաշտոնը, ուզում էի բացի դասերից զբաղվել նաև հասարակական գիտական աշխատանքով, մինչև ադապտացվեի, քանի որ առաջին կուրս էի և ԲԳՖն չուներ ՈՒԳԸ նախագահ, որոշեցի ներգրավվեմ:

ՈՒԳԸ-ի անդամ եմ 2-րդ կիսամյակից և մենք հասցրել ենք կատարել մեկ ծրագիր:

2023 մայիս-ին 3-րդ Կուրսի ուսանողուհի Իննա Հարությունյանյանի կողմից անցկացվեց ծրագրավորման C++ լեզվի կուրս:Կուրսին մասնակցեցին ԻԿՄ 1-ին կուրսի ուսանողները:Կուրսի ընթացքում ուսանողները ստացան ընդհանուր գիտելիքներ C++ լեզվից,կրկնեցին իրենց իմացածը,ստացան իրեն հուզող հարցերի պատասխանները:

## ՀԱՎԵԼՎԱԾ 2

Հաշվետվություն
ԵՊՀ ԻՄ Բնագիտական ֆակուլտետի Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի վարիչի ժ/պ Աննա Սեդրակի Հովակիմյանի
2022-2023 ուս. տարում կատարած աշխատանքների մասին

2022-2023 ուս. տարում ԵՊՀ ԻՄ-ում աշխատել եմ որպես Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի վարիչի ժ/պ: Ուսումնական տարվա մեկնարկին կազմվել է ամբիոնի աշխատանքային պլանը ԵՊՀ ԻՄ ռազմավարական ծրագրին համապատասխան: Ամբիոնի աշխատանքները կազմակերպել եմ ըստ ամբիոնի աշխատանքային պլանի:

Յարաքանչյուր ամիս հրավիրվել է ամբիոնի նիստ, որտեղ քննարկվել են նիստերի ժամանակացույցով նախատեսված, ինչպես նաև ընթացիկ աշխատանքների և խնդիրների հետ կապված հարցեր: Պարբերաբար վեր են հանվել ուսումնական պրոցեսի հետ կապված հարցերը, տեղ գտած թերությունները, մշակվել է ռազմավարություն դրանց համապատասխան լուծումներ տալու ուղղությամբ:

Ուսումնական տարվա սկզբում քննարկվել և հաստատվել են դասախոսների աշխատանքային պլանները և առարկայալան փաթեթները: Վերանայվել են մի շարք դասընթացների ծրագրեր համապատասխանեցնելով դրանք ակնկալվող կրթական

վերջնարդյունքներին: Քննարկվել և հաստատվել են ամփոփիչ և ընթացիկ քննությունների քննական հարցաշարերը, քննական տոմսերը:

Ամբիոնի նիստում քննարկվել են հետազոտական բաղադրիչ ներառող առարկաների բովանդակությունը, քննարկվել և հաստատվել են հետազոտական աշխատանքների թեմաները:

Ամբիոնի նիստում քննարկվել և հաստատվել են ավարտական աշխատանքների թեմաները: Պարբերաբար գրանցվել են ղեկավարների հանդիպումները ուսանողների հետ: Կազմակերպվել է ավարտական աշխատանքների նախապաշտպանությունը և պաշտպանությունը:

Իրականացվել է ուսումնական գործընթացի հսկողություն: Ըստ ամբիոնում հաստատված գրաֆիկի կազմակերպվել են դասալսումներ, որոնց արդյունքները քննարկվել են ամբիոնի նիստերում:

Ամբիոնի նիստերում քննարկվել են նաև ուսանողների և շրջանավարտների հարցումների արդյունքները դասավանդման որակի, գնահատման համակարգի և դրա օբյեկտիվության, մատուցվող կրթական ծառայություններից բավարարվածության վերաբերյալ: Մշակվել է միջացառումների պլան թերությունները վերացնելու ուղղությամբ:

Ամբիոնի կողմից աշխատանք է տարվել մասնաճյուղում գործող ակադեմիական ազնվության համակարգին համակողմանի աջակցություն ցուցաբերելու ուղղությամբ: Ընթացիկ ստուգումները և քննությունները անց են կացվել տեսախցիկներով հսկվող լսարաններում, քննաշրջանի և լուծարքային քննությունները կազմակերկպվել են հանձնաժողովներով:

Աշխատանքներ են տարվել e-learning հարթակից օգտվելու ուղղությամբ: Մասնավորապես, բոլոր ուսումնականօժանդակ նյութերը (դասախոսություններ, տեսասահիկներ, հարցաշարեր, թննական տոմսերի նմուշներ) տեղադրվել են հարթակում:

Ամբիոնը համագործակցել է ուսանողական կառույցների՝ ՈՒԳԸ-ի, ՈՒԽ-ի հետ: Աշխատանք է տարվել ծրագրավորման օլիմպիական խմբակ ձևավորելու,

ուսանողական գիտաժողովներին ուսանողների մասնակցությանը աջակցելու, հետազոտական աշխատանքների վերաբերյալ զեկուցումներ կազմակերպելու (այդ թվում օտար լեզվով) ուղղությամբ:

Հաշվետու ժամանակաշրջանում եղել եմ "Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա" կրթական ծրագրի ղեկավարը: Ղեկավարել եմ 2023-2027 թ.թ.-ի համար նախատեսված կրթական ծրագրի մշակման աշխատանքները: Նոր կրթական ծրագիրը համապատասխանեցված է ԵՊՀ-ի նոր ուսումնական պլանների ձևաչափին: Կրթական ծրագրում նախատեսված է երեք ուղղություն՝ ինֆորմատիկա, մեխատրոնիկա և ռոբոտատեխնիկա, թվային անվտանգություն: Նեղ մասնագիտացումը մեկնարկելու է չորրորդ կիսամյակից: Մասնագիտացումն իրականացվելու է ուսանողների ընտրությամբ: Առարկայական բովանդակությունը ձևավորելիս հաշվի են առնվել նաև ֆակուլտետի դասախոսների, շրջանավարտների, ուսանողների, գործատուների կարծիքները, ինչպես նաև աշխատաշուկայի և տարածաշրջանի պահանջարկը:

Յոթերորդ կիսամյակում նախատեսված է շարժունության պատուհան, որը ենթադրում է, որ 12 ETSC կրեդիտ ուսանողները պետք է ձեռք բերեն ԵՊՀ ԻՄ հարակից ծրագրերից կամ այլ բուհերում գործող կրթական ծրագրերից:

Կրթական ծրագրում ներդրվել է գնահատման նոր բազմագործոն համակարգ համաձայն ԵՊՀ և ԵՊՀ ԻՄ-ում հաստատված նոր կարգի:

2022-2023 ուս. տարում ունեցել եմ ուսումնական ծանրաբեռնվածություն դոցենտի 0.5 դրույքաչափով:

Դասավանդել եմ "Տվյալների կառուցվածքներ" (դաս, գործն.), "Տվյալների հենքեր" (դաս., գործն.), առարկաները՝ առկա և հեռակա ուսուցման բաժիններում: Լրամշակել եմ առարկայական փաթեթները ներառելով ինքնուրույն աշխատանքների կատարման և գնահատման կարգը: Գործնական պարապմունքների համար հավաքագրել և պատրաստել եմ խնդիրներ և թեստեր: Յուրաքանչյուր թեմայի խնդիրների լուծման համար մշակել եմ մեթոդական ցուցումներ:

Ղեկավարել եմ 3 ավարտական աշխատանք ( 2-ը՝ առկա, 1-ը՝ հեռակա ուսուցման բաժիններում) :

Շարունակել եմ գիտահետազոտական աշխատանքը “Արհեստական բանականության հիմնախնդիրներ և արդի լուծումներ” ուղղությամբ: Մասնակցել եմ Հայ-Ռուսական համալսարանի տարեկան կոնֆերանսին: Հրատարակել եմ երկու և նախապատրաստում եմ ևս երկու գիտական հոդված:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԵՊՀ ԻՄ Բնագիտական ֆակուլտետի
Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչի ժ/պ
Գևորգ Սարգսի Սիմոնյանի
2022-2023 ուս. տարում կատարած աշխատանքների մասին

2022 -2023 ուս. տարում ԵՊՀ ԻՄ-ում շարունակել եմ աշխատել որպես Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչի ժ/պ: Ունեցել եմ ուսումնական ծանրաբեռնվածություն դոցենտի 0.75 դրույքաչափին համապատասխան:

Ամբիոնի աշխատանքները կազմակերպել եմ համաձայն ամբիոնի աշխատանքային պլանի: Հիմնականում ամիսը մեկ հրավիրվել է ամբիոնի նիստ, որտեղ քննարկվել են պլանով նախատեսված առկա և հեռակա ուսուցման բաժինների ընթացիկ աշխատանքների և խնդիրների հետ կապված հարցեր: Պարբերաբար վեր են հանվել ուսումնական պրոցեսի հետ կապված հարցերը, թերությունները և համաձայն մշակված ռազմավարության կատարվել են գործընթացներ համապատասխան լուծումներ տալու ուղղությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում մասնակցել եմ 2023-2027թթ. համար ԻԿՄ կրթական ծրագրի մշակման խմբի աշխատանքներին:

ԵՊՀ-ի կողմից իրականացվող կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչի ներդրման վերաբերյալ ԵՊՀ ռեկտորի հրամանի հիման վրա ԲԲ մասնագիտության 2022-2023 ուս. տարում շարունակվել է հետազոտական բաղադրիչի իրականացումը Ագրոէկոլոգիա առարկայից:

Ամբիոնի կողմից աշխատանք է տարվել մասնաճյուղում գործող ակադեմիական ազնվության համակարգին համակողմանի աջակցություն ցուցաբերելու ուղղությամբ: Ամբիոնի նիստերում քննարկվել և հաստատվել են քննությունների անցկացման եղանակները: Ամբիոնի բոլոր դասախոսները ներկայացրել են քննական գործընթացի մանրամասները, քննական տոմսերի կառուցվածը, ուսանողի գիտելիքի գնահատման կարգը: Իրականացվել են ընթացիկ ստուգումներ տարբեր աշխատանքների ձևաչափով: Ընթացիկ ստուգումները և քննությունները անց են կացվել հիմնականում առկա:Կազմակերպվել է առկա ուսուցման մեկ և հեռակա ուսուցման երկու մասնագիտությունների 30-ից ավելի ավարտական աշխատանքների նախապաշտպանությունը և պաշտպանությունը: Հանձնաժողովի անդամներին նախօրոք ուղարկվել են ուսանողների աշխատանքների փաթեթները: Գործընթացն անցել է պատշաճ մակարդակով: Դասավանդել եմ “Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ” (դասախոսություն), “Ագրոէկոլոգիա” (դաս.), “Հանքային ռեսուրսներ օգտագործում և պահպանություն” (դաս.), “Էկոլոգիական մոնիտորինգ և փորձաքննություն” (դաս.) և այլ առարկաները՝ առկա և հեռակա ուսուցման բաժիններում: Ղեկավարել եմ 6 ավարտական աշխատանք:

Ամբիոնի 2 գիտական խմբեր՝ ղեկավարներ Գևորգ Սիմոնյան և Ալեքսան Մարգարյան, իրականացրել և հաջողությամբ ավարտել են ‹‹Երևանի պետական համալսարան›› հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի ներքին դրամաշնորհային թեմաները, որին մասնակցել են նաև եչկու ուսանողնեևր:

Ամբիոնի դոցենտ Կարեն Հովսեփյանը արժանացել է «Դասավանդման գերազանցության մրցանակին»

Հրատարակել եմ 3 գիտական հոդված և 2 զեկուցման թեզիսներ:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Մ.Ա. ԶԱՔԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ_____Ք.Վ.ՕԹԱՐՅԱՆ